



Վարչական գործ
թիվ ՎԴ/3129/05/12

Վ Ե Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«15» փետրվարի 2013թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, հետևյալ կազմով՝
Ճախագահությամբ՝ դատավոր **Ա. Միրզոյանի,**
քարտուղարությամբ՝ **Ք. Ջոհրանյանի,**
մասնակցությամբ՝

հայցվոր՝ **Ֆենիկ Սահակյանի**
/ք. Երևան, Ռուսթավելի փող., 36 տուն/

ներկայացուցիչ՝
Գ. Գևորգյանի

պատասխանող՝ Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի
հետևանքով անօթևան մնացած ընտանիքների
բնակարանային խնդիրների լուծման նպատակով
պետական աջակցությամբ իրականացվող
բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում
կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման
հարցերով հանձնաժողով
/ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3/

ՀՀ քաղաքաշինության նախարարության
/ք. Երևան, Կառավարական տուն 3/

ներկայացուցիչ՝
Մ. Ազատյանի

երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի
/ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16/

ներկայացուցիչ՝
Գ. Բաղդասարյանի

Գյումրու քաղաքապետարանի
/ք. Գյումրի, Շիրակացու 68/

դռնբաց դատական նիստում՝ 24.01.2013 թվականին, քննեց վարչական գործն՝ ըստ հայցի
Ֆենիկ Սահակյանի ընդդեմ Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան
մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ
իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի
տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի՝ «Հանձնաժողովի 15.02.2012թ.
թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ՝

1. Գործի դատավարական նախապատմությունը և հայցվորի իրավական դիրքորոշումը:

Ֆենիկ Սահակյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Աղետի
գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների
բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող
բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների
/բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի՝ «Հանձնաժողովի 15.02.2012թ. թիվ 4
արձանագրությամբ ընդունված որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին և հայտնել, որ
Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների

1
Մտնոց թիվ 15
19 8

բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովը /այսուհետ Հանձնաժողով/ 2012 թվականի փետրվարի 15-ին որոշել է Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցողների ցուցակում Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չընդգրկել: Վերջինս այդ միջամտող վարչական ակտը համարում է չիմնավորված, ոչ իրավաչափ և խնդրում է անվավեր ճանաչել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2002թ. սեպտեմբերի 19-ի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Գյումրու քաղաքապետարանի՝ որպես երկրաշարժից անօթևանի բնակարանի հաշվառման վերցնելը մերժելու մասին ակտը: Միաժամանակ Գյումրու քաղաքապետարանին պարտավորեցվել է Ֆենիկ Սահակյանին իր ընտանիքի 4 անձով՝ որպես երկրաշարժից անօթևան մնացածների, հաշվառման վերցնել բնակարան ստացողների հերթացուցակում և նրա հետ նոր կառուցվող շենքերից բնակարան հատկացնելու պայմանագիր կնքել:

Գյումրու քաղաքապետարանի բնակբաժնի պետի կողմից 16.03.2012թ. տրված տեղեկանքի համաձայն Ֆենիկ Սահակյանն իր ընտանիքի 5 անձով հաշվառված է երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային հերթացուցակում, երեք սենյականոց բնակարան ստանալու համար /հերթական համար 959/:

2002թ. փետրվարի 21-ին և 2003թ. դեկտեմբերի 26-ին Գյումրու քաղաքապետարանի և Ֆենիկ Սահակյանի միջև կնքված պայմանագրերի համաձայն Գյումրու քաղաքապետարանը պարտավորվել է Ֆենիկ Սահակյանի ընտանիքին հատկացնել Գյումրիում նոր կառուցվող շենքերից բնակարան:

2012թ. փետրվարի 15-ին Հանձնաժողովը որոշել է Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցողների ցուցակում Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չընդգրկել:

Պատասխանողը մերժման հիմքում դրել է «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիր հաստատելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 5.1 բաժնի և ՀՀ կառավարության 12.06.2008թ. թիվ 2 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» դրույթները, ինչպես նաև լրացուցիչ կիրառել է ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի դրույթները:

Պատասխանողը պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2002թ. սեպտեմբերի 19-ի վճռում «առկա տեղեկատվության» համաձայն Ֆենիկ Սահակյանը մինչև երկրաշարժը գրանցված է եղել Օրջոնիկիձե փողոցի թիվ 315 հասցեում, իսկ նրա ամուսինը Օրջոնիկիձե փողոցի թիվ 167 հասցեում, սակայն վարձով բնակվել են Ռուսթավելի թիվ 23 տանը, որի սեփականատերն է եղել Հ. Միքայելյանը: Նույն վճռի համաձայն նշված տունը երկրաշարժի հետևանքով դարձել է 4-5-րդ աստիճանի վնասվածության: Հետևաբար Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չի կարող հանդիսանալ ծրագրի շահառու:

Բացի այդ պատասխանողը նշել է նաև, որ «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիր հաստատելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 5.1 բաժնի և ՀՀ կառավարության 12.06.2008թ. թիվ 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» դրույթների համաձայն պետական աջակցության ծրագրերի շրջանակներում առաջնահերթ կարգով դիտարկվում են երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած, սահմանված կարգով հաշվառված այն ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնք և որոնց ընտանիքի անդամների մի մասը նախորդ տարիներին իրականացված աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում չեն ստացել բնակարան նախկինում կորցրած բնակարանի չափով:

ՀՀ Սահմանադրության 1 հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Իրավական պետությունում պետական մարմինների գործունեության հիմնարար սկզբունքներ են հանդիսանում ի թիվս այլ սկզբունքների.

–պետության սահմանափակված լինելը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

–պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունը կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սույն գործով հայցվորի ընտանիքը, որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացածների, բնակարան ստացողների հերթացացակում հաշվառվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2002թ. սեպտեմբերի 19-ի վճռի ուժով:

Պատասխանողը պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2002թ. սեպտեմբերի 19-ի վճռում «առկա տեղեկատվության» համաձայն Ֆենիկ Սահակյանը մինչ երկրաշարժը գրանցված է եղել Օրջոնիկիձե փողոցի թիվ 315 հասցեում, իսկ նրա ամուսինը՝ Օրջոնիկիձե փողոցի թիվ 167 հասցեում, սակայն վարձով բնակվել են Ռուսթավելի թիվ 23 տանը, որի սեփականատերն է եղել Հ. Սիքայեյանը: Նույն վճռի համաձայն նշված տունը երկրաշարժի հետևանքով դարձել է 4-5-րդ աստիճանի վնասվածության: Հետևաբար Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չի կարող հանդիսանալ ծրագրի շահառու:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածը, յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը կայացվել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված՝ իր լիազորությունների շրջանակում: Այսինքն, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռն իրավաչափ է և որևէ անձ, հատկապես պատասխանող պետական մարմինը, չի կարող կասկածի տակ առնել այդ վճռի իրավաչափությունը:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14 հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Պատասխանողը նշել է, որ «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 5.1 բաժնի և ՀՀ կառավարության 12.06.2008թ. թիվ 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» դրույթների համաձայն՝ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում առաջնահերթ կարգով դիտարկվում են երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած, սահմանված կարգով հաշվառված այն ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնք և որոնց ընտանիքի անդամների մի մասը նախորդ տարիներին իրականացված աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում չեն ստացել բնակարան նախկինում կորցրած բնակարանի չափով:

Դրանով իսկ պատասխանողը խախտել է ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 26-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի թիվ 432 և 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1402-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 11 կետի պահանջները, որով սպառնիչ թվարկված են Հանձնաժողովի կողմից հերթացուցակում ընդգրկված անձանց բնակարանային շինարարության ծրագրում չընդգրկելու վերաբերյալ որոշում ընդունելու հիմքերը:

Այդ հիմքերից և ոչ մեկը Հանձնաժողովի որոշման մեջ առկա չէ, քանի որ, տվյալ դեպքում, այդպիսիք ուղղակի չկան:

Ինչ վերաբերվում է ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի՝ ՀՀ կառավարության 11.09.2008թ. թիվ 1024 որոշման 4-րդ մասի 1-ին կետի բ/ պարբերությամբ կատարված փոփոխությանը, որով «կացարանները /բնակարանը, բնակելի տունը, տան մի մասը/ բառերը փոխարինվել են «կացարանները /բազմաբնակարան շենքի բնակարանը/ արտահայտությամբ, ապա միևնույն է դա չի կարող կիրառվել, քանի որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ է, ուստի հետադարձ ուժ չի կարող ունենալ:

Այդ է սահմանում ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասը, ըստ որի անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նույն է ամրագրված նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78 հոդվածի 1-ին մասում, ըստ որի իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում, և հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Այսպիսով պատասխանողի պատճառաբանություններն անհիմն են և խախտում են հայցվորի իրավունքները:

«ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածը սահմանում է, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, ինչը չի կատարվել:

Արդյունքում խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4 և 8 հոդվածների պահանջները, ըստ որոնց վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը և վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, պատասխանողի ոչ իրավաչափ վարչարարությունը խախտում է հայցվորի՝ որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքի, բնակարանային խնդիրները լուծելու իրավունքները, և հակասում է «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով հաստատված ծրագրի խնդիրներին՝ այն է «երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը»:

Պատասխանողի նման վարքագիծը հարուցում է հայցվոր կողմի տարակուսանքը, և ներկայացնելով սույն վիճարկման հայցը՝ ապավինում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի 3-րդ և 23 հոդվածի 2-րդ մասերի արդարացի պահանջներին, որոնց համաձայն, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, փակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, և գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Պատարանին խնդրել է անվավեր ճանաչել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի 15.02.2012թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշումը:

Գործի քննության դատական նիստին ներկայացած հայցվորի ներկայացուցիչը հայցը պնդել է ամբողջությամբ և խնդրել է բավարարել այն:

2. Պատասխանողների և երրորդ անձանց փաստարկները և իրավական դիրքորոշումը:

Պատասխանող Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի և երկրորդ պատասխանող ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ վարչական դատարան հայցադիմումի պատասխան չի ներկայացվել:

Գործի քննության դատական նիստին ներկայացած պատասխանողների ներկայացուցիչը հայցի դեմ առարկել է ամբողջությամբ և խնդրել է դատարանին մերժել այն:

Երրորդ անձ Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի կողմից դատարանին հայցադիմումի պատասխան չի ներկայացվել:

Գործի քննության դատական նիստին ներկայացած Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը առարկելով հայցի դեմ՝ խնդրել է մերժել այն:

Գործի քննության ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված երրորդ անձ Գյումրու քաղաքապետարանը գործի քննությանը չի ներկայացել:

Դատարանը ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով գործը քննել է պատշաճ ծանուցված Գյումրու քաղաքապետարանի բացակայությամբ:

3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները:

Լսելով կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով և գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Դատաքննության ընթացքում դատարանը պարզված համարեց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2002թ. սեպտեմբերի 19-ի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Գյումրու քաղաքապետարանի՝ որպես երկրաշարժից անօթևանի բնակարանի հաշվառման վերցնելը մերժելու մասին 27.12.2001թ. թիվ 009/3201 ակտը: Միաժամանակ Գյումրու քաղաքապետարանին պարտավորեցվել է Ֆենիկ Սահակյանին իր ընտանիքի 4 անձով՝ որպես երկրաշարժից անօթևան մնացածների, հաշվառման վերցնել բնակարան ստացողների հերթացուցակում և նրա հետ նոր կառուցվող շենքերից բնակարան հատկացնելու պայմանագիր կնքել:

- 2002թ. և 2003թ. դեկտեմբերի 26-ին Գյումրու քաղաքապետարանի և Ֆենիկ Սահակյանի միջև կնքված պայմանագրերի համաձայն Գյումրու քաղաքապետարանը պարտավորվել է Ֆենիկ Սահակյանի ընտանիքին հատկացնել Գյումրիում նոր կառուցվող շենքերից բնակարան:

- Գյումրու քաղաքապետարանի բնակբաժնի պետի կողմից 16.03.2012թ. տրված տեղեկանքի համաձայն Ֆենիկ Սահակյանը դատարանի վճռի համաձայն իր ընտանիքի 5 անձով հաշվառված է երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային հերթացուցակում, երեք սենյականոց բնակարան ստանալու համար /հերթական համար 959/:

- Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովը /այսուհետ Հանձնաժողով/ 2012 թվականի փետրվարի 15-ի թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշմամբ որոշել է Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակավայրի մասնաժողովի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցողների ցուցակում Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չընդգրկել:

Հանձնաժողովի 15.02.2012թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշման քաղվածքի համաձայն բերվել է հետևյալ պատճառաբանությունը. «... Նշված վճռում առկա տեղեկատվության համաձայն Ֆենիկ Սահակյանը մինչև երկրաշարժը գրացված է եղել Օրջոնիկիձե փողոցի թիվ 315 հասցեում, իսկ նրա ամուսինը՝ Նորային Սահակյանը, Օրջոնիկիձե թիվ 167 հասցեում: Սակայն վարձով բնակվել են Ռուսթավելի թիվ 23 տանը, որի սեփականատեր է եղել Հռիփսիմե Միքայելյանը: Նույն վճռի համաձայն նշված տունը երկրաշարժի հետևանքով դարձել է 4-5-րդ աստիճանի վնասվածությամբ: Բերված փաստերը վկայում են, որ Ֆենիկ Սահակյանի ընտանիքը չի կարող հանդիսանալ ծրագրի շահառու, ղեկավարվելով՝

- «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի /15.08.2001թ. թիվ ՀՕ-203/ 5-րդ գլխի 5.1 բաժնի և ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայցեակարգի դրույթներով, որոնց համաձայն պետական աջակցության ծրագրերի շրջանակներում առաջնահերթ կարգով դիտարկվում են երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած, սահմանված կարգով հաշվառված այն

ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնք և որոնց ընտանիքի անդամների մի մասը ախորդ տարիներին իրականացված աղտի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում չեն ստացել բնակարան նախկինում կորցրած բնակարանի /սենյակների թվով/ չափով:

- ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի դրույթներով»:

Նշված որոշմամբ հանձնաժողովը որոշել է.

«1.Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցողների ցուցակում չընդգրկել՝

1.3 Ֆենիկ Սահակյանի ընտանիքը՝ «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /15.08.2001թ. թիվ ՀՕ-203/ 5-րդ գլխի 5.1 բաժնի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի, ինչպես նաև ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի դրույթներով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն»:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը սահմանում է. «...Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»:

Տվյալ դեպքում առկա է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 19.19.2002թ. թիվ 02-1661 վճիռը, որով հաստատված է համարվել այն փաստը, որ հայցվոր Ֆենիկ Սահակյանը իր ընտանիքի 4 անձով երկրաշարժի հետևանքով դարձել է անօթևան, անվավեր է ճանաչվել Գյումրու քաղաքապետարանի՝ որպես երկրաշարժից անօթևանի բնակարանի հաշվառման վերցնելը մերժելու մասին 27.12.2001թ. թիվ 009/3201 ակտը, պարտավորեցվել է Գյումրու քաղաքապետարանին՝ Ֆենիկ Սահակյանին իր ընտանիքի 4 անձով՝ որպես երկրաշարժից անօթևան մնացածների, հաշվառման վերցնել բնակարան ստացողների հերթացուցակում և նրա հետ նոր կառուցվող շենքերից բնակարան հատկացնելու պայմանագիր կնքել: Տվյալ դեպքում վարչական մարմինը՝ Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով, պարտավոր էր ելնել այն կանխավարկածից, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը իրավաչափ է, նրանում նշված հանգամանքները նախապես հաստատվածի ուժ ունեն և որևէ անձ, այդ թվում՝ որևէ պետական մարմին, չի կարող կասկածի տակ դնել օրինական ուժի մեջ մտած վճռի իրավաչափությունը: Նշվածից հետևում է, որ վարչական մարմինը հայցվոր Ֆենիկ Սահակյանի կողմից ներկայացրած փաստաթղթերի հիման վրա ըստ էության չէր կարող ընդունել վիճարկվող որոշումը և պարտավոր էր հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 19.09.2002թ. թիվ 02-1661 վճիռը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն. «1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում»:

Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ վիճարկվող վարչական ակտը «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով ենթակա է մասնակի անվավեր ճանաչման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար»:

Հայցվորի կողմից դատարան ներկայացված հայցադիմումի համար վճարվել է օրենքով սահմանված չափով պետական տուրք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարան ներկայացվող հայցադիմումների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված է համապատասխան չափերի պետական տուրքի վճարման պարտավորություն հայցվորների համար, դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվորի կողմից վճարված պետական տուրքի գումարը հանդիսանում է հայցվորի կողմից կրած դատական ծախս, որն անհրաժեշտ է եղել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից վճարված 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, որպես դատական ծախս, ենթակա է փոխհատուցման ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:

Ֆինք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ն Ո Ւ Տ Ց`

Ֆենիկ Սահակյանի հայցն ընդդեմ Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի` «Հանձնաժողովի 15.02.2012թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին, բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման հարցերով հանձնաժողովի 15.02.2012թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշումը` Ֆենիկ Սահակյանի ընտանիքի մասով:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունից հօգուտ Ֆենիկ Սահակյանի բռնագանձել 4.000 (չորս հազար) դրամ` որպես նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Սույն վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով` ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Սույն վճիռը կանոնված չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության փիջոցով` պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ`

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ